ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

«05» հունիսի 2020թ. № ԱԿ2/180-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ, ՄՀԵՐ ԻՍՈՒՆՑԻ ԵՎ ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 24-րդ կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի թիվ 10/2020 եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ծառայողական կարգապահությունը խախտելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ներքին անվտանգության վարչության անձնակազմի անվտանգության և պահպանության բաժնի անցագրային կետի հերթապահներ Միքայել Միքայելյանի, Մհեր Իսունցի և Արթուր Սարգսյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կարինե Գրիգորյանին՝ սույն հրամանը իրազեկել ողջ անձնակազմին:

Recoverable Signature

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ